

Ատենադրուժիւն

Ս. Խաչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ

Մասնաւոր ծխական ժողովի

20 Դեկտեմբեր 1981

Ժողովը գումարուեցաւ Agincourt Collegiate I. 262I Midland ave. վարժարանի սրահին մէջ, 20 Դեկտեմբեր 1981, Կիրակի ժամը 11:00 Կ.Ա. Նախագահութեամբ Արժանապատիւ Տէր Յուսիկ Քհնյ. նշանեանի:

Ըստ Թեմական Կանոնադրութեան յօդ. 18ին ժողովին կ'ատենապետէր ծխական Խորհուրդի Ատենապետ Պր. Արմէն Քիւրքճեան եւ ատենադպրութեան պարտականութիւնները ստանցնած էին Պր. Ներ Դելոնդ Շահմելիքեան եւ Մինաս Հաճէթ:

Ատենապետը ներկաներու թիւը ճշդելէ վերջ, 77 քուէարկու անդամ, ժողովը կանոնադրութեան 17րդ-յօդուածին համաձայն օրինաւոր յայտարարեց եւ Տէր Հօր աղօթքով ժողովը բացուեցաւ:

Ժողովի օրակարգը կարդացուեցաւ եւ ժողովականներուն վաւերացման ներկայացուեցաւ:

Թեմական Տուրքի Վճարում - կանոնադրութիւն յ. 15-Ե-:

Պր. Ե. Իսթանպուլեան առաջարկեց թեկնածու ներկայանալու պայմանաժամին մէկ ամիսով երկարած գումար:

Պր. Օննիկ Կէօզպաթ առաջարկեց որ 6 Յունուար 1982 օր Ս. ծննդեան պատարագ մատուցուի:

Օրակարգը, վերոյիշեալ երկու նիւթերու յաւելումով, ներկաներու մեծամասնութեան ձեռամբարձ քուէարկութեամբը ընդունուեցաւ:

Ատենապետ Պր. Արմէն Քիւրքճեան նախ ժողովին ներկայացուց Պր. Ե. Իսթանպուլեանի առաջարկը:

Ներկաներու մեծամասնութեամբ եւ ձեռնբարձ քուէարկութեամբ պայմանաժամը ամիս մը եւս երկարեցաւ:

Պր. Քիւրքճեան, ժողովականներուն ըսաւ թէ՛ որպէսզի ծխական Խորհուրդը ծուխին վիճակած թեմական տուրքը կարենայ վճարել ըստ կանոնադրութեան 15-Ե յօդուածին, անդամական ժողովէն արտօնութիւնը պէտք է ստանայ եւ այդ պատճառաւ այս մասնաւոր անդամական ժողովը գումարած է:

Ծխական Խորհուրդի Փոխ Ատենապետ Տօքթ. Ա. Վարդան Այնաճեան ժողովին կարդաց Առաջնորդարանէ ստացած 24 նոյեմբեր 1981 թուակիր եւ 27539 թիւ նամակը:

Պր. Յ. Գուլումճեանի հարցումին առ ի պատասխան, կարդացուեցաւ ծխական Խորհուրդի 10 Դեկտեմբեր 1981 պատասխան նամակը:

✓ Տօրթ. Ա. Վարդան Այնաճեան բացատրեց թէ ինչու Տուրքերու Գործակալութեան դիմուած է եւ անոնց 13 Ապրիլ 1981 թուակիր նամակին համաձայն Առաջնորդարանէ ցանկ մը պէտք է ստացուի: Ան մանրամասնօրէն տեղեկութիւն տուաւ երեք հոգինոց ծխական Խորհուրդի պատուիրակութեան մը, 9 Յունիս 1981 օր Առաջնորդարանի մէջ Առաջնորդ Սրբազանի հետ ունեցած տեսակցութեան եւ 1 Յուլիսին թեմական Խորհուրդի երկու ներկայացուցիչին ու ծխական Խորհուրդին Թորոնթոյի մէջ ունեցած ժողովին մասին: Ըսաւ թէ՝ Առաջնորդ Սրբազան խոստացած էր իրենց փաստաբանին միջոցաւ, ծխական Խորհուրդիս կողմէ Տուրքերու Գործակալութեան դրկրելի նամակ մը պատրաստել տալ, ինչ որ մինչեւ հիմա չէր եկած: Թեմական Խորհուրդի ներկայացուցիչները խոստացած էին օրինական լուծման ձեւ մը գտնել, բայց այդ ալ չէր եղած:

✓ Կարդացուեցաւ Առաջնորդարանի 2 Հոկտեմբեր 1981 թուակիր անգլերէն նամակը եւ Տօրթ. Այնաճեան ըսաւ թէ՝ իրեն հեռաձայնով ըսուածները եւ նամակի պարունակութիւնը նոյնը չէին:

Պր. Հանրմեան փափաքեցաւ որ 1 Յուլիս 1981ի ժողովին ատենագրութիւնները կարդացուին: Չեռագրին տէրը ժողովին ներկայ չըլլալուն կարելի չեղաւ կարդալ:

Պր. Գուլումեան հարց տուաւ թէ ծխական Խորհուրդը պատրաստակամութիւնը ո՞ւնէր թեմական տուրքը վճարելու:

Պր. Զիւրքեան պատասխանելով ըսաւ թէ՝ ծուխերուն բարոյական պատասխանատուութիւնն է թեմական տուրք վճարել եւ Առաջնորդարանի ծախսերուն մասնակից ըլլալ, սակայն այս մասնակցութիւնը տեղական օրէններուն հակառակ ձեւով պէտք չէ ըլլայ:

✓ Կարդացուեցաւ ծխական Խորհուրդի փաստաբանին Առաջնորդարան դրկած 21 Հոկտեմբեր 1981 թուակիր նամակը եւ ըսուեցաւ թէ դրկած 1000 տօլարը վերադարձած էր:

Պատասխանելով այն հարցումին թէ՝ ծխական Խորհուրդը թեմական տուրք վճարելու կամեցողութիւնը ունէր, կարդացուեցաւ ծխական Խորհուրդին՝ Առաջնորդին ուղղեալ, 10 Նոյեմբեր 1981 թուակիր նամակը, ուր կ'առաջարկուէր Ս. ծննդեան պատարագի առթիւ ըլլալիք ծախսերը հոգալ առ հաշիւ տուրքի:

Հարցուեցաւ, թէ պատասխան եկած էր: Ըսուեցաւ որ ոչ, վերջին նամակը որ ստացուած էր 24 Նոյեմբերի նամակն էր որ արդէն կարդացուեցաւ:

Ժողովականները ուզեցին գիտնալ թէ՝ ծուխեր ի՞նչ հիման վրայ, տուրք կը վճարեն:

✓ Պր. Արմէն Զիւրքեան, Առաջնորդարանէ ստացուած ցանկի մը վրայէն, մանրամասն տեղեկութիւն տուաւ:

Տօքթ. Ն. Ալեանաք ուզեց հասկնալ թէ՛ Ս. Խաչ Եկեղեցին, առանց դժուարութեան, ո՞րքան տուրք կրնար վճարել:

Պր. Յ. Գուլյումճեան խօսք անելով ըսաւ թէ՛ տուրքի հարցը միայն Ս. Խաչ Եկեղեցւոյ չէ, այլ Առաջնորդարանի եւ Գանատայի միւս Հայաստանեայց Եկեղեցիներուն հետ ալ է: Աւելցուց թէ Առաջնորդարան վճարելի տուրքի քանակութիւնը ծուխը ինքը պէտք է որոշէ:

Պր. Յակոբ Նար առաջարկեց, որ Առաջնորդարան տեղեկացուի որ Ս. Խաչ Եկեղեցիէն պահանջուած գումարը ծուխին վճարելու կարողութենէն վեր է եւ ներկաները, առանց ստացագիր ուզելու, այս տուրքի քանակութիւնը իրենց մէջ հաւաքեն եւ Առաջնորդարան դրկեն:

Դիւանը, այս առաջարկը անընդունելի գտաւ եւ ժողովի նկատողութեան չյանձնեց:

Պր. Մարտիկ Հէքիմեան ուզեց գիտնալ թէ՛ Առաջնորդարանը Տէր Հայրը իր պաշտօնէն կրնար ետ քաշել:

Պր. Զիւրքճեան պատասխանեց ``Այո՛՛`:

Պր. Արմէնակ Վարդանեան առաջարկեց որ անդամատուրքը 35 տօլարի բարձրացուի:

Դիւանը իրմէ խնդրեց որ այս առաջարկը տարեկան ծխական ժողովին ներկայացնէ:

Տիկին Հանրմեան ըսաւ թէ, Առաջնորդարանը շատ լաւ գիտէ որ Ս. Խաչ ծուխը այս տուրքը չկրնար փոխանցել ու երբ մեր փաստաբանն ալ իրենց նամակ կը գրէ, անոր միջամտութիւնը չեն ուզեր:

Պր. Խապայեան խօսք ուզելով ըսաւ թէ՛ Առաջնորդարանը մեզի ծախողեցնելու կ'աշխատի, որպէսզի Ս. Երրորդութիւն Եկեղեցին՝ Ս. Խաչ Եկեղեցւոյ սահմաններուն մէջի իր նոր հողին վրայ շինութիւն ընէ:

Պր. Յ. Գուլյումճեան ուզեց տուրքի հարցով ծխական Խորհուրդին տեսակէտը գիտնալ:

Տօքթ. Այնաճեան պատասխանելով ըսաւ. Ս. Խաչ ծուխը Գանատայի տուրքերու օրէնքներուն թոյլատրած սահմաններուն մէջ մտադիր է վճարել իր թեմական տուրքը, այս պատճառաւ ալ ստիպուած է Առաջնորդարանէն սէրվիսներու ցանկ մը ստանալ:

Տկն. Հանրմեան կ'առաջարկէ Առաջնորդարանէ գալիք ցանկին համեմատ եւ պետական օրէնքներու սահմանին մէջ այս տուրքը վճարել:

Առաջարկը կ'երկրորդուի, հինգ վեց անդամներու կողմէ:

Պր. Ղ. Շահմելիքեան վերոյիշեալ առաջարկին բարեփոխութիւն մը առաջարկեց ըսելով թէ սէրվիսներուն արժէքը պէտք է ըիզընդարձ ըլլայ:

Գաղափարի փոխանակութիւններէ վերջ Պր. Ղ. Շահմելիքեան իր բարեփոխութիւնը ետ քաշեց:

Այս պահուն, Եկեղեցի երթալու համար Տէր Հայրը ժողովէն արտօնութիւն կը խնդրէ:

Գիւանի ուշադրութեան կը յանձնուի Ս.Ծննդեան Պատարագի առաջարկը: նկատելով թէ՝ Տէր Հայրը ժողովէն կը մեկնի, Գիւանը յարմար կը նկատէ թեմական Տուրքի Վճարման՝ հարցը ընդհատել եւ օրակարգի երրորդ նիւթին անցնիլ:

Ժխական Խորհուրդի Ատենապետը ժողովականներուն տեղեկացուց թէ՝ Տէր Հայրը 5 Յունուար օր ծրագալոյսի պատարագ ալ մատուցանել չէր ուզեր այն նկատողութեամբ թէ Ս.Քաթրինոս պէտք է երթար եւ Առաջնորդ Սրբազանին պատարագին սպասարկէր: Ինքը ջանացած էր Տէր Հայրը համոզել ըսելով թէ Ս.Քաթրինոսի մէջ կղերական կայ եւ ծրագալոյսի պատարագը պէտք է մատուցուի եւ ապա այդ օրուայ համար Եկեղեցին ապահոված է: Պր. Զիւրքճեան Տէր Հօրմէ խնդրեց որ ժողովականներուն քացատրութիւն տայ թէ ի՞նչու Ս.Ծննդեան պատարագ մատուցանել յարմար չի նկատեր:

Տէր Հայրը այս խնդրանքին պատասխան չտուաւ: Ժողովականները ուզեցին գիտնալ թէ Առաջնորդ Սրբազան արդեօ՞ք Տէր Հօր հրահանգած է որ այդ օր Ս.Պատարագ չմատուցանէ:

Տէր Հայրը պատասխան չտուաւ, Ժխական Խորհուրդը տեղեկութիւն չունէր:

Անդամները Ժխական Խորհուրդի Ատենապետէն պահանջեցին որ Առաջնորդ Սրբազանին հեռագրէն եւ կացութիւնը հասկնայ:

Պր. Գուլումճեան առաջարկեց որ Ս.Խաչ Եկեղեցւոյ մէջ Ս.Ծննդեան պատարագը անպայման մատուցուի:

Առաջարկը երկրորդուեցաւ եւ միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Տէր Հայրը ժողովէն մեկնեցաւ:

Գիւանը օրակարգի երկրորդ նիւթը դարձեալ ժողովի նկատողութեան բերաւ:

Պր. Խապայեան հետեւեալ առաջարկը բերաւ. նկատի ունենալով որ Առաջնորդարանը այսօրուայ Ժխական Խորհուրդի անդամներուն հանդէպ ալէրժի ունի, ծուխի անդամներէն 3 անձերէ կազմուած յանձնախումբ մը Առաջնորդարան դրկուի եւ այս հարցը Առաջնորդի հետ տեսնուի:

Գիւանը այսպիսի առաջարկ մը յարմար չնկատեց, երկրորդող ալ չգտնուեցաւ:

Տօքթ. Նուպար Ալեանք առաջարկեց որ, 20 Դեկտեմբերին գումարուած Ժխական Մասնաւոր Անդամական ժողովը, Ժխական Խորհուրդին իրաւասութիւն տայ որ Ժխական Խորհուրդի դիւանը թեմական Խորհուրդի յաջորդ նիստին ներկայանայ եւ ծուխի թեմական տուրքի հարցը Գանատական տուրքի օրէնքներուն համաձայն վերջնականապէս հարթէ:

Առաջարկը երկրորդունեցաւ:

Առաջարկը քուէարկութեան դրունեցաւ:

Ներկայ եւ քուէարկու հարիւր անդամի ձեռնքարծ քուէարկութեամբ
առաջարկը միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Հակառակ եւ ձեռնպահ քուէ գործածող չեղաւ:




Ժողովը, դիւանին պարտականութիւն տուաւ որ առնուած որոշումը

Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմական Խորհուրդի Ատենապետին հեռագրեն:

Ժողովը փակուեցաւ 15:30ին:

Ատենադպիրներ

Ատենապետ




Ղեկունդ Նանսելիբեան

Մինաս Հաճէթ

Արմէն Քիւրքճեան

Նախագահ



Տէր Յուսիկ Բինյ. Նշանեան